

123
284

ՏԻՐԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԵՐՍՈՅԵԱՆ

Քահանայութեան

25-ամեայ

Յուբիլեանիս

Առիթով

ARCHBISHOP GIRAN NERSOYAN

On the 25th Anniversary of His Ordination
into Priesthood



1954

ՏԻՐԱՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՓՈՍ ՆԵՐՍՈՅԱՆ

Քահանայության 25-ամեայ Յոբելեանին Առիթով

Կենսագրող

ԹՈՐԿՈՄ ՎՐԴ. ՄԱՆՈՎԿԵԱՆ

ARCHBISHOP TIRAN NERSOYAN

*On the 25th Anniversary of His Ordination
into the Priesthood*

Biographer

VERY REV. TORKOM V. MANOOGIAN



Հրատարակութիւն


Յոբելեանական Կեդրոնական Յանձնախումբի

Published by

JUBILEE CENTRAL COMMITTEE

630 Second Ave., New York 16, N. Y.

1954



Արքեպիսկոպոս Կիրակոս Գեղարքունացի

ԳԵՐ. Տ. ՏԻՐԱՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԵՐՍՈՑԵԱՆ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի

ARCHBISHOP TIRAN, PRIMATE OF THE AMERICAN DIOCESE

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Հայաստանեայց Եկեղեցւոյ Ամերիկայի Թեմին Թեմական Խորհուրդը յորելինական տարի նշանակեց 1954 տարեշրջանը, Թեմին մէջ Հանդիսաւորելու համար Ամերիկայի Հայոց Առաջնորդ Գեր. Տ. Տիրան Ս. Արքեպիսկոպոսի կուսակրօն քահանայ ձեռնադրութեան քսանհինգամեակը: Թեմական Խորհուրդի այս որոշումը իւրացուեցաւ Թեմական Պատգամաւորական Ժողովին կողմէ:

Կազմուեցաւ Յորելինական Կեդրոնական Յանձնախումբ մը՝ բաղկացած Նիւ Եօրքի եւ շրջակայքի դրասէր եւ եկեղեցանուէր անդամներէն: Պատույ նախագահներ ընտրուեցան Գեր. Տ. Տիրայր Արքեպիսկոպոս Յովհաննէսեանց, Գեր. Տ. Մամբրէ Արքեպիսկոպոս Գալֆայեան, Վեր. Անդրանիկ Պետիկեան, Տիրաք Արշակ Գարակէօղեան եւ Վահան Բիւրքճեան: Կեդրոնական Յանձնախումբի գիւմնի անդամներ նշանակուեցան Տ. Հմայեակ Վրդ. Ինթոյեան՝ Ատենապետ, փաստարան Ռիչըրտ Կրէկըրի Փոխ-Ատենապետ, Տ. Վրթանէս Ա. Քհնյ. Փափաղեան՝ Արձանագրող, տիրար Նուպար Տորեան՝ Թղթակցող, տիրար Զօրճ Պաշեան՝ Գանձապահ, Տ. Եղիշէ Արղ. Կիզիրեան՝ Փոխ-Գանձապահ:

Համայնքներու մէջ կատարուած հանդիսութիւններէն զոյացած դրամական հասոյթը պիտի յատկացուի, Առաջնորդ Սրբազան Հօր փափաքով եւ որոշումով, Ամերիկայի Թեմին մէջ եկեղեցականներ պատրաստելու ստիպողական ու նուիրական գործին:

Թեմական Խորհուրդը, ընդառաջելով Սրբազան Հօր բարի ցանկութեան, իր 1953, Յունիս 10-ի ժողովին մէջ որոշեց «զոյացած հասոյթը դնել Առաջնորդ Սրբազանին տրամադրութեան տակ, յառաջացնելու համար եկեղեցական պատրաստելու գործին»:

Շնորհակալութեամբ կը յիշենք ազնիւ օժանդակութիւնն ու նպաստը, Տիրա Հայկ Գաւուքճեանին՝ սեփականատէր Պինկէճմ Լուսափորագրական Ընկերութեան, Սրբուհի Էսէֆեանի եւ այլոց, կենսագրական այս գրքոյկին պատրաստութեան մէջ:

ԹՈՐԳՈՄ ՎՐԴ. ՄԱՆՈՒԿԵԱՆ
Կենսագրող

Foreword

The Most Reverend Archbishop Tiran Nersoyan, Primate of the Eastern Diocese of the Armenian Church of America, was ordained into the celibate priesthood on July 23, 1928. The Diocesan Council has designated this year of our Lord, 1954, as Jubilee Year throughout the Diocese in observance of the twenty-fifth anniversary of the Primate's ordination.

To supplement Jubilee celebrations in the parishes, a Central Committee has been organized from among prominent members of our Diocese, with the Most Rev. Archbishop Tirayr Hovhannesyantz, Archbishop Mampre Calfayan, Rev. Antranik Bedikian, Mr. Arshak Karagheusian and Mr. Vahan Kurkjian serving as Honorary Presidents.

The members of the Executive Committee for celebrations are the following: The Very Rev. Hmayak Intoyan, Chairman; Attorney Richard Gregory, Vice Chairman; Rev. Vertanes Papazian, Recording Secretary; Mr. Noubar Dorian, Corresponding Secretary; Mr. George Bashian, Treasurer; The Very Rev. Yeghishe Gizirian, Assistant Treasurer.

The financial returns of the celebrations, in accordance with the desire and decision of His Eminence Archbishop Tiran, will be put at his disposal and will be administered by him in the urgent and sacred work of preparing young men for the priesthood in our Diocese of America.


We gratefully acknowledge the cooperation and contribution of Mr. Haik Kavookjian, of the Bingham Photo Engraving Company in New York, Miss Srpouhie Essefian, and Mr. Paul Chapootian of the Edison Photo Engraving Company of New York, in the preparation of this booklet.

TORKOM VARTABED MANOOGIAN
Biographer

ՏԻՐԱՆ ԱՐՔԵՊՍ. ՆԵՐՍՈՅԵԱՆ



- ԱՆՁՆ ՈՒ ԳՈՐԾԸ
- ԻՐԱԳՈՐԾՈՒՄՆԵՐ ԵՒ ՁԳՏՈՒՄՆԵՐ
- ԿԵՆՍՍԳՐԱԿԱՆ ԳԻԾԵՐ



Արթուր Արթուրյան

Ա Ն Ձ Ն Ո Ւ Գ Ո Ր Ծ Ը (ՏԻՐԱՆ ԱՐԲԵՊՍՆԵՐՍՈՅԵԱՆ)



ԻՏԻ ջանանք հակիրճ կերպով ուրուագծել Ամերիկայի Հայոց Առաջնորդ Գեր. Տ. Տիրան Արքեպիսկոպոսի անձը, եւ այդ անձին կապուած դանազան երեւոյթներ, որոնք ի յայտ կը բերեն անոր բազմազան հետաքրքրութիւնները, կարողութիւններն ու ձգտումները:

1. ՄԱՆԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՊԱՏԱՆԵԿՈՒԹԻՒՆ

Գեր. Տ. Տիրան Արքեպիսկոպոս, մկրտութեամբ Ներսէս Թաւուզճեան, ծնած է Այնթապի մէջ, 1904, Օգոստոս 23-ին: Հայրը՝ Տ. Ներսէս Քհնյ. Թաւուզճեան, Առաջին Աշխարհամարտին կը տարազրուի ամբողջ ընտանիքով, եւ իր ժողովուրդին հետ կը քշուի մինչեւ Սիւրիոյ անապատները: Մայրը, Անիճա, Այնթապի աղջկանց Կրթասիրաց Վարժարանի առաջին տեսչուհին էր: Պատանին Ներսէս կը ճաշակէ տարազրուեան դառնութիւնները, իր երեք քոյրերուն եւ մէկ եղբօրը հետ (Մարիամ, Դշտոյ, Շողիկ, Գէորգ): Տարազրուեան ընթացքին պղտիկ քոյրը կը մեռնի: Հայրն իր մէջ կը ծնի երկրորդ եղբայրը՝ Յակոբ:

Առաջին Աշխարհամարտի զինադադարէն յետոյ, երբ Այնթապ կը վերադառնան 1919ին, կարճ կը տեսէ իրենց ուրախութիւնը, որովհետեւ Յրանասական բանակը պարզելով Կիլիկեան, զայն կը յանձնէր Մուսթաֆա Բէմալի բանակներուն: Այնթապի հայերը, 1920 - 1921 թուականին, հերոսական կռիւ մը մղելով թուրքերուն դէմ, կը պաշտեն մինչեւ Հալէպ:

1921ին, Այնթապի հերոսամարտի վախճանին, երբ Յրանասցիները տակաւին քաշուած չէին, Ներսէս կը զրկուի Երուսաղէմ, Սրբոց Յակոբեանց Վանքի ժա-

ռանգաւորաց Վարժարանին մէջ շարունակելու համար իր ուսումը:

2. ՈՒՍՈՒՑԻՉ

Երուսաղէմի Ժառանգաւորաց Վարժարանը աւարտելէ յետոյ, 1924ին, Ներսէս Թաւուզճեան կը ձեռնադրուի կիսասարկաւագ, եւ կը կարգուի ուսուցիչ Վանքին հովանաւորած աղջային նախակրթարանին մէջ:

Սարկաւագ կը ձեռնադրուի 1926, Հոկտեմբեր 4ին, կուսակրօն քահանայ ըլլալու համար, ուրիշ ինն անձերու հետ: Իր աստուածաբանական ուսումը շարունակելով հանդերձ, կը նշանակուի ուսուցիչ Ժառանգաւորաց Վարժարանին մէջ:

1928, Յուլիս 22ին, քահանայական ձեռնադրութիւն ստանալով, Ներսէս Սարկաւագ կը վերակոչուի Տիրան արեղայ: Ձեռնադրից Եղիշէ Պատրիարք Դուրեան, կը փոխէ «Թաւուզճեան» մականունը «Ներսոյեանի», զայն առնելով ձեռնադրեալի մեծ հօրը Ներսօ անունէն:

Պատրիարքարանի կարգադրութեամբ, Տիրան արեղայ Անգլիա կը մեկնի, իր օժակից ընկերը Նորայր արեղայ Պողարեանի հետ, եւ երկու տարի կ'ուսանի, նախ Եօրջայրի Միքիլիա քաղաքի մօտիկ գտնուող Քալէն ավ տիւր Բէզբէքչըն, ապա Լոնտոնի Քիմկո Քալէն հաստատութիւններուն մէջ:

1930ին, Երուսաղէմ դառնալով, Ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի մէջ կը դասաւանդէ դրաբար լեզուի, աստուածաբանութեան, եւ եկեղեցական պատմութեան եւ Ս. Գրոց մեկնաբանութեան դասեր, նոյն առեւ ստանձնելով զանազան վարչական պաշտօններ Պատրիարքարանին մէջ:

Տիրան Վարդապետի աւանդած դասերը եղած են պահեր մտքի լուսաւորութեան

ու թափանցման, մղելով աշակերտը դուրս ածելու իր արամաբանութիւնն ու դատաւարութիւնը, բանալով աշակերտին աչքին առջև ընդարձակ դաշտ մը իմացական հետաքրքրութեանց: Ան խիստ էր աշակերտներու հանդէպ: Եւ աշակերտները վախով բայց հաճոյքով կը պատրաստուէին դասն դիմաւորելու դասարանին մէջ: Կիրակի յետ միջօրէի եւ կամ ամառնային արձակուրդի խմբական պտոյտները, տարբեր մակարդակի վրայ եւ անպաշտօն կերպով, առիթներ էին դասարանային խօսակցութիւնները շարունակելու:

Երուսաղէմէն յետոյ Բարիզ (1938), Լոնտոն (1940), Ալեքիքա (1944), Տիրան Վարդապետ կը շարունակէ սորվելու եւ սորվեցնելու իր բնական ունակութիւնը, կազմակերպելով պղտիկ խումբերէ բաղկացեալ մտերմիկ շրջանակներ: Իր ջանքերով Ամերիկա բերուած եւ կրօնաւորութեան պատրաստող երկտասարդ ուսանողներուն եւ հոգեւորականներուն հետ, մասնաւոր կարգադրութեամբ եւ ամառնային խմբական հաւաքոյթներով, Տիրան Սրբազան կը մնայ պրպտող իմացականութիւնը եւ իր հոգեւոր ու իմացական ըջտեմարանէն իր աշակերտներուն ու բարեկամներուն բաժին հանող ուսուցիչը:

3. ԳԱՐՈՋԻԾ ԵՒ ՀՐԱՊԱՐԱԿԱՆՈՍ

Տիրան Սրբազան ուշադիր է որ քարոզ պահէ իր ունեցած սկզբնական նշանակութիւնը քրիստոնէական պաշտամունքին մէջ: Ան չի շփոթեր քարոզը մէկ կողմէն հրապարակախօսութեան եւ դասախօսութեան հետ, միւս կողմէն չի փոխարինէր դասն ազգասիրական եւ մարդասիրական ճառաբանութեամբ: Տիրան Սրբազանի քարոզները քրիստոնէական լոյսով մօտեցումներ, վերլուծումներ, մեկնաբանութիւններ եւ թափանցումներ են յաւիտեանական ճշմարտութիւններու, որոնք Աւետարանով եւ քրիստոնէական վարդապետութեամբ ուսուցուած են: Այս ճշմարտութիւնները ան կը կիրարկէ, կը

պատշաճեցնէ ներկայ դարու անհատին, ընկերութեան, ազգութեան ու մարդկութեան կեանքին, լուսաւորելով այն ճամբան որ անցեալէն դժուած կ'երկարի վէպի ազդան:

Համոզման ջերմութիւնը, իր խօսուածքին պարզութիւնը, իր խօսքին կտրուակութիւնը, իր թաւ ձայնին յատուկութիւնը, իր փոխանցած պատգամին խորութեան ու լայնութեան գիտակցութիւնը տարբեր են, որոնք հաւատացեալի մտքին ու սրտին վերեւ կը բանան լուսամուտներ՝ Աստուծոյ թաղաւորութեան առաջնորդող: Այդ լուսամուտներէն եկած լոյսին սեւեռուն, հաստացեալը կը զլայ մէկ կողմէն իր պղտիկութիւնը, անհունին զիմաց իր անէութիւնը, եւ միւս կողմէն իր ներքին զօրութիւնները կ'ամփոփէ, Աստուծոյ ներթափանցող շնորհները թեւ ըրած սաւառներու համար դէպի տիեզերական ու յաւիտեանական վախճանը մարդկութեան, դէպի անվախճան եւ «առակել կեանքը», Քրիստոսի անձին մէջ յայտնուած:

Տիրան Սրբազանի դասախօսութիւնները — հրապարակախօսը հակադրաբար քարոզիչին — ունկնդիրը կը գնեն խոզարկող մտքի մը դիմաց: Որեւէ նիւթ իր մանրամասնութեանը մէջ եւ իր թելադրած կարելիութիւններովը կը քննարկուի, կը վերլուծուի, կը պարզաբանուի, եւ համարուելով կը դասաւորուի: Դասախօսութիւնները առիթներ են իրեն համար տարբեր մակարդակի վրայ եւ ընկերային ուրիշ գործօնի մը ճամբով ուսուցանելու, եւ անհատական ու ընկերային կեանքին մէջ ուղեցոյց եղող գաղափարներ, սկզբունքներ եւ ճշմարտութիւններ տարածելու համար: Պերճախօսութիւնը չէ եղած Տիրան Սրբազանի մտահոգութիւնը, այլ ճշմարտութեան յայտարարութիւնը եւ բանաձեւումը: Եւ այս՝ շատ անգամ, առանց «մանուածապատ» խօսքի ձեւեր գործածելու, հետեւաբար, անսեթեւեթ կարծրութեամբ: Այնքան որ՝ «ընկալեալ

սովորութեանց հետեւող» միտքերուն համար այդ արտայայտութիւնը կրնայ թուել վերաւորական, իսկ այդ վերաբերմունքին հետեւ կեցող անձն ալ կրնայ նկատուիլ «անդիջող»:

Կեանք Բաբին անդաւաճան քարոզիչն է Տիրան Արքեպիսկոպոս:

4. ԱՍՏՈՒԱԾԱՐԱՆ ԵՒ ԻՄԱՍՏԱՍԵՐ

Աստուածաբանութիւնը եւ իմաստասիրութիւնը իրարու լրացուցիչ գիտութիւններ են կապէս: Այդ պատճառաւ ըսուած է թէ՛ «աստուածաբանելու համար պէտք է իմաստասիրել»:

Գիտուն ուսուցչին՝ Եղիշէ Պատրիարք Դուրեանի անմիջական շունչին ներքեւ կը աճի ուսման տենչը Տիրան Վարդապետին մէջ: Տարիներու ընթացքին, իրբեւ աշակերտ, իրբեւ ուսուցիչ, շփման մէջ գալով դարերու մեծ իմացականութեանց հետ, Տիրան Վարդապետ լինողինը արժանի կացուցած է նկատուելու տրամաբանող ու թափանցող միտք մը, եկեղեցական կանոնադրութեան եւ իմաստասիրական հայեցողութեան հմուտ իմացականութիւն մը: Գիտութիւնները եւ ընդհանուր ծանօթութիւնները մարդկային կեանքի եւ ընկերային շարժումներու մասին, կը հայթայթեն տարբեր, սրունցմով ան կը կառուցանէ ու կը հաստատէ իր քրիստոնէական աշխարհայեացքը: Վերլուծող, դատաւորող, տրամաբանող եւ կառուցանող այս միտքը, ճախացած քրիստոնէական տեսիլքի մը բովանդակութեամբ, չի վարանիր քրիստոնէական ճշմարտութեան փորձաքարին դարնել հարցեր՝ հակասական նկատուող, մասնադիտական թուող, եւ գիտնական նկատուած իմացականութեանց թախչը կաշկանդող:

Համալսարանի ուսուցիչինը, օտար բարձրաստիճան եկեղեցականներ, Արեւելեան Ուղղափառ եկեղեցիներու դաւանութեամբ հետաքրքրուող հեղինակներ եւ պարբերաթերթեր, կը յանձնարարեն դեմել Տիրան Եպիսկոպոսի գրուածքներուն եւ տեսութեանց:

5. ԿԱՐԱԿԵՐՊՈՂ ԵՒ ՏԵՍՈՒԾ

Գեր. Տ. Տիրան Արքեպիսկոպոս խորունկ գիտակցութեամբ բարձրած է Հայ Եկեղեցւոյ անցեալը, սնոր պատմական դերը Հայ ազգին համար, եւ սնոր մէջ տակաւին կենսունակ կարելիութիւնները, որոնցմով ան լիովին պիտի կարողանայ իրագործել իր առաքելութիւնը մեր ժողովուրդին եւ ընդհանուր քրիստոնէական աշխարհի կեանքին մէջ: Այս գիտակցութիւնը իմացական ու հոգեկան կորով մը ստեղծած է Սրբազանին մէջ:

Եղիշէ Պատրիարք Դուրեան, 1921-ին Երուսաղէմի Պարիարքական Աթոռին գահալը ընտրուելու առիթով, ըսած է թէ իր Եկեղեցւոյն եւ ազգին անճիւղման վրէժխնդիր պիտի ըլլայ, պատրաստելով եկեղեցականներ, որոնք ժողովուրդին ու եկեղեցւոյն սիրովը լեցուն՝ նուիրուին անոնց իմացական ու հոգեւոր մշակութեան գործին: Տիրան Վարդապետ, իր օժակից ընկերոջ՝ Նորայր Վարդապետին հետ — այժմ Եպիսկոպոս յերուսաղէմ — առաջին հունձքն է այդ «աղնուական վրէժխնդրութեան»:

Իր քահանայական ձեռնադրութեանէն եւ Անդրիոյ մէջ իր ուսանողութեան երկու տարուան շրջանը ստարտելէն յետոյ, Տիրան Վարդապետ կը գտնայ առաջաւոր դէմքերէն Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Մայրավանքին:

Եղիշէ Պատրիարք Դուրեան կը վախճանի 1930, Ապրիլին:

Թորգոմ Պատրիարք Գուշակեանի դահակալութեամբ, 1931, Դեկտեմբեր 1, կը երաշխաւորուի շարունակութիւնը Եղիշէ Պատրիարք Դուրեանի ծրարիւններուն:

Ոսկան Պէյ Մարտիկեան, նախկին Ընդհանուր Վարիչ Թղթատարական Գործակալութեան Օսմանեան Կայսրութեան մէջ, եւ ապա Երեւմտական Նախարար Իրազի, կը հրաւիրուի Երուսաղէմ, հաւասարակշռելու համար վանքին երեւմտաքը, եւ ծրարելի մը պատրաստելու, որուն համաձայն լաւաղոյնս պիտի օգտագործուին

վանքապատկան կալուածները: Տիրան Վարդապետ ձեռնհասօրէն կ'օժանդակէ ելեւմտադէտ Ոսկան Պէյլին, արժանանալով անոր գնահատանքին ու վստահութեան:

1932ին, Տիրան Վարդապետ կը նշանակուի տեսուչ Երուսաղէմի Ժառանգաւորաց Վարժարանին եւ Ընծայարանին: Տեսուչի եւ կազմակերպողի իր կարողութիւնները կը յայտնուին վարժարանի ընդհանուր կեանքի վերելքին մէջ: Ուսուցիչներ եւ աշակերտներ հաւասարապէս կը զգան թէ խոտապահանջ, դիտակից, եւ իրենց պարտաւորութեանց կատարումին հսկող աչք մըն է տեսուչ Տիրան Վարդապետը: Կը խոտանան ամալերը քննութիւնները: Աշակերտները չեն կրնար այլեւս անտարբեր մնալ իրենց դասերուն հանդէպ:

Որոշ ծրագրի մը համաձայն աշակերտին օրուան ժամերը կը բաշխուին այլազան աշխատանքներու վրայ: Դասաւանդութեանց պահերէն դուրս, այսպէս կոչուած «պարապոյ ժամերը» աշակերտին կը լեցուին այլ կարգի զբաղումներով: Պարտաւորիչ կը դառնայ մարմնակրթանքը: Եւ Ժառանգաւորաց Վարժարանը, բացի իր տարեկան մարզական դաշտահանդէսներէն, կը մասնակցի Երուսաղէմի միջնորոգական մարզական մրցումներուն: Պաւլոս-պօլ, Վօլի-պօլ, Ֆուք-պօլ — ամերիկեան բառով՝ Սաֆըր — եւ Փիմկփօնկ կը դառնան մաս Ժառանգաւորին ամենօրեայ կեանքին: Ժառանգաւորաց Ֆուք-պօլի խումբը Երուսաղէմի հայ երիտասարդութեան պարծանքն էր եղած, պարտութեան մատնելով Հոռվմէական Եկեղեցւոյ հովանաւորած երկրորդական վարժարանի «անպարտելի» յայտարարուած խումբը:

Վարժարանի շէնքին ու բակին հիւսիսային եւ հարաւային ցանկապատին մօտ տարածուող հողը կը բաժնուի աշակերտներուն միջեւ, որպէս զի պարտիզամշակութեամբ զբաղին: Սուրբ Յակոբի խորաններուն եւ Գրիստոսի Գերեզմանին համար

մասնաւոր խնամքով պատրաստուած ծաղկեփունջեր հողեկան գոհունակութիւն մը կուտան զանոնք խնամած ու ընծայ տանող աշակերտին: Իսկ Ժառանգաւորին դեղեցկագիտական ճաշակը, անոր մշակած ծաղիկները եւ հոգատարած պարտեզին մաքրութիւնն ու կոկիկութիւնը կ'ենթարկուին մասնաւոր յանձնախումբի մը քննութեան, զինք արժանացնելով այդ նրպատակին յատկացուած մրցանակին:

Կը կազմակերպուին շաբաթ երեկոյեան լսարանական հաւաքոյթները, որոնք առիթ կուտան աշակերտին մէկ կողմէ բանաստեղծութիւններ ունկնդրելու զանազան նիւթերու մասին, եւ միւս կողմէ զբաղանք երեկոյթի մը մասնակցելու՝ արտասանութեամբ, երգով, շարադրութեամբ, տըրուած նիւթի մը շուրջ «ատենախօսելու» փորձով, եւ կամ առաջադրուած հարց մը պաշտպանելով՝ «վիճարանական երեկոյթի»* մը մէջ:

Ժողովրդային հանդէսներու կազմակերպումով, Ժառանգաւորաց Վարժարանը կը դրուի խանդավառութեան, հետաքրքրութեան եւ եռուն կեանքի մը մէջ:

*Շահան Ռ. Պերպէրեան, որ Թորգոմ Պատրիարքի հրաւերով եգիպտոսէն Երուսաղէմ փոխադրուած էր, Ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի մէջ կը դասաւանդէր ընկերաբանական, իմաստասիրական եւ գեղեցկագիտական նիւթեր, եւ ընդհանուր ուղեցոյցն էր այս յայտագիրներուն մասնակցող աշակերտներուն: Ան կը վարէր նաեւ աշակերտներուն վիճարանական եւ ատենախօսական ելոյթները, ցուցմունքներ կատարելով եւ իր նկատողութիւնները յայտնելով: Յակոբ Օշական, հայ գրականութեան ուսուցիչը, հայթայթիչն էր գրական կտորներուն եւ շարադրութեան: Թորգոմ Պատրիարքի անձնական ներկայութիւնը՝ վարդապետ հայրերու եւ ուսուցիչներու շփանքով, բացառիկ նշանակութիւնն էր հանդիսութիւն մը կուտար այդ երեկոյթներուն:

Ամալերը Գրական Մրցանքները, Վարդանանց Տօնին եւ այլ առիթներով բեմադրուած ներկայացումները, իմացական ու հողեկան վայելքի բացառիկ առիթներ կը հանդիսանան Երուսաղէմի հայ հասարակութեան համար: Ժառանգաւոր աշակերտները իրենց ապագայ ասպարէզին նախափորձն ու նախաճաշակը կ'առնեն, հրապարակաւ կատարելով ատենախօսութիւն՝ նախապէս որոշուած նիւթի մը մասին, եւ մասնակցելով արտասանութեան, երգի, ինքնազիր արձակ եւ ոտանաւոր քերթուածներու մրցանքներուն:

Կարգապահութիւնը, ամենօրեայ պաշտամանց կանոնաւոր ներկայութիւնը, եկեղեցւոյ արարողութեանց եւ Սուրբ Տեղեաց մէջ կատարուող հանդիսութեանց մասնակցութիւնը, եւ եկեղեցական երաժշտութեան ու կրօնական դասաւանդութեանց հանդէպ ցոյց տրուած մասնաւոր հոգածութիւնը կը բարձրացնեն վարկը Սրբոց Յակոբեանց Միաբանութեան, եւ օրինակելի հաստատութեան մը կը վերածեն Ժառանգաւորաց Վարժարանը:

6. ԱՌԱՋՆՈՐԳ

Տիրան Վարդապետի կարողութիւնները՝ իբրեւ կազմակերպող, տեսուչ, աստուածաբան-իմաստասէր, քարոզիչ-հրապարակախօս, եւ ուսուցիչ, աւելի լայն չափով ի յայտ կուգան, երբ Թորգոմ Պատրիարքի կարգադրութեամբ կը մեկնի Բարիզ, 1938ին, եւ կը շարունակէ ծառայել Աստուծոյ, Հայ Եկեղեցւոյն մէջ եւ հայ ժողովուրդին համար:

Բարիզ կը մնայ մինչեւ 1939, Դեկտեմբեր, վարելով Փոխանորդ-Տեսչի պաշտօնը՝ Վոյաճապուհ Արքեպիսկոպոս Քիւպրեանի հիւանդութեան պատճառաւ:

Լոնտոնի Ս. Սարգիս Եկեղեցւոյ խընամակալութեան խնդրանքին վրայ, եւ Երուսաղէմի Պատրիարքութեան հաւանութեամբ, Տիրան Վարդապետ կը ստանձնէ

սոյն եկեղեցւոյն հովուութիւնը, մինչեւ 1944, Երկրորդ Համաշխարհային Պատերազմի տարիներուն հողեւոր խրախոյսները չէլով իր հօտին, երբ Անգլիոյ մայրաքաղաքը ուժաւորութիւն կ'ենթարկուէր: Նոյն շրջանին, ամերիկեան բանակին մէջ ծառայող երիտասարդ հայ տղաք եւ աղջիկներ, Լոնտոնի Հայոց Եկեղեցին այցելելու առիթով, կը ծանօթանան Տիրան Վարդապետին, եւ անոր մէջ կը տեսնեն զիրենք հասկցող հողին եւ իրենց ընկերային ու ազգային մտահոգութիւններուն հողորդակից իմացականութիւն մը: Տիրան Վարդապետ, իր կարգին, ըմբռնելով ամերիկացի երիտասարդութեան միտքը խոովող ընկերային, մշակութային, ազգային ու կրօնական հարցերն ու դժուարութիւնները, կը համողուի թէ Հայ Եկեղեցւոյ հովանիին ներքեւ, ամերիկացիին հայ սերունդը ամէն կարելիութիւն ունի կենսունակօրէն շարունակելու իր հայրերուն հաւատքն ու աւանդութիւնները:

Երբ Գեր. Տ. Գարեգին Արքեպ. Յովսէփեանց, Ամերիկայի Թեմին Առաջնորդը, դահակալ կ'ընտրուի Կիլիկիոյ Կաթողիկոսական Աթոռին, Հայոց Եկեղեցւոյ Ամերիկայի Թեմին Պատգամաւորական Ժողովը, 1943, Հոկտեմբեր 3ին, առաջնորդական պաշտօնին յարմարագոյն թեկնածուն կը համարի Տիրան Վարդապետ Ներսոյեանը, որուն Ամերիկա ժամանումը տարիով մը կ'ուշանայ, պատերազմի պատճառով ստեղծուած փոխադրական դժուարութեանց իբրեւ հետեւանք:

1944, Նոյեմբեր 6-ին, Տիրան Վարդապետ Նիւ Եօրք կը հասնի եւ կը ձեռնարկէ իր պաշտօնին, զբաղով իր ուսերուն դըրուած պարտականութեանց ծանրութիւնը, եւ յստակօրէն տեսնելով բազմադիմ կարիքները Թեմին:

1944ին, Ամերիկայի Թեմին Առաջնորդարանը կը դադարէր Նիւ Եօրք քաղաքի Հինգերորդ Պողոտայի թիւ 156 շէնքին մէջ, եւ ունէր երկու փոքրիկ դաստէնակ

եւ մէկ քարտուղար* : Թեմին հոգեւորական դասը կը բաղկանար տասնեւհինգ կրօնաւորներէ : Հայ Եկեղեցին ահագին գործ ունէր կատարելիք ամերիկաբնակ հայ ժողովուրդի հոգեւոր անդատանին մէջ : Հոգեւոր մշակներով միայն կարելի էր այդ անդատանը բարգաւաճ պահել :

1945ին, Ամենայն Հայոց Վեհ. Հայրապետի ընտրութեան մասնակցելէ յետոյ յիշմիածին, եպիսկոպոս օծուելով, առաջնորդ Տիրան Սրբազան Մերձաւոր Արեւելքի քաղաքներէն երիտասարդներ կը ընտրէ որոնք յօժարութիւն կը յայտնեն Հայ Եկեղեցւոյ ծառայութեան մէջ մտնելու : Տիթրոյիթէն Տէր եւ Տիկին Ալեք եւ Մարի Մանուկեան, Հայ Եկեղեցւոյ եւ ժողովուրդին սիրովը հարուստ ամուլը, հեռատես եւ ազնուական քայլը կ'առնեն, վեց ուսանողներու չորս տարուան դպրոցական ծախքերը ստանձնելով : Այս բարի օրինակին կը հետեւին ուրիշներ : Եւ յաջորդական տարիներուն նոր ուսանողներ կը հոգատարուին տարբեր քաղաքներու մէջ բնակող եկեղեցանուէր հայորդիներու կողմէ : Իրավիճակէն՝ Կարապետ Ղազարոսեան եւ Ֆրէտ Աւագեան, Նիւ Եօրքէն՝ Տիգրան Մարլեան, Էվրնսթէն՝ Ուոլթըր Վարդանեան, մէկական ուսանողի դպրոցական ծախքերը կը ստանձնեն : Նոյնպէս, Նօրթ Գիլատելֆիոյ Ս. Երրորդութիւն եւ Ուստրի Ս. Փրկիչ Հայոց Եկեղեցիներու համայնքները, Կիւլապի Կիւլպէնկեան Հիմնադրամը եւ ազգանուէր եղբայրակցութիւններ, մէկական ուսանողի դպրոցական ծախքերը կը հոգան, օժանդակած ըլլալու համար Թեմին հոգեւոր գործին :

*1950ին, Առաջնորդարանի գրասենեակը կը գտնուի կառուցուելիք Մայր Եկեղեցւոյ եւ Մշակութային Տան սեփական հողին վրայ գոյութիւն ունեցող չորս յարկնոց շէնքերէն մէկուն մէջ, վեց պաշտօնեաներով :

Տիրան Եպիսկոպոս զիմում կը կատարէ Անթիլիասի Կաթողիկոսարանին եւ Երուսաղէմի Պատրիարքութեան, որպէս զի երիտասարդ հոգեւորականներ Ամերիկա զրկուին Թեմին մէջ ծառայելու համար : Ինը տարուան ընթացքին Ամերիկա եկած եւ կամ Առաջնորդ Տիրան Եպիսկոպոսի կողմէ ձեռնադրուած հոգեւորականներուն թիւն է քսանեւմէկ : Ներկայիս — 1954, Յունուար — եօթը ուսանողներ կան, որոնք Անթիլիասի դպրեվանքին եւ Ամերիկեան ձեռնարաններու մէջ կը դաստիարակուին, կրօնական ասպարէզին նուիրուելու համար : Աստիճա՛ք չորսը Ամերիկա ծնած ու մեծցած երիտասարդներ են :

Յատկանշական է որ Տիրան Եպիսկոպոս առատ ու հապճեպ շնորհարարութիւն չի կատարեր կրօնական կարգերու եւ աստիճաններու՝ «ի վարձատրութիւն երկար տարիներու բարուք ծառայութեան» : Սարկաւազութեան ձեռնադրութիւնը, քահանայութեան օծումը, Մասնաւոր եւ Մայրազոյն Վարդապետի աստիճաններու տրուելիւնը եւ ուրիշ պարզեւտարութիւններ, զոչուցութեամբ կը բաշխուին Եկեղեցւոյ այս ժիւր եւ արթուն իշխանաւորին ձեռքով : Նկատի առնելով հանդերձ անհասանելի եւ համայնքներէ ներկայացուած պահանջները, Տիրան Սրբազան կը ջանայ հաւատարիմ մնալ եպիսկոպոսներուն ուղղուած առաքելական պատգամին, որ ազդուօրէն կրկնուած է նաեւ Ձեռնադրութեան Մաշտոցին մէջ. «Ձեռս վազվազակի յուրուք վերայ մի՛ դնիցէք», Ա. Տմթ. Ե 22 :

Հայոց Եկեղեցւոյ Ամերիկայի Թեմը, Տիրան Եպիսկոպոսի առաջնորդութեան ներքեւ, կը դառնայ ամենէն կազմակերպեալ, գործունէայ եւ բարգաւաճ թեմը Հայ Եկեղեցւոյ : Կր կազմակերպուին նոր ծուխեր, կը գնուին ու կը կառուցուին եկեղեցական շէնքեր եւ սրահներ : Առաջնորդարանի Մշակութային Կեդրոնական Յանձնաժողովը, հիմնադրուած նախորդ առաջնորդ՝ Գեր. Տ. Գարեգին Արքեպիսկոպոս Յովսէփեանցի ջանքերով, կը շա-

րունակէ սալ տարեկան մշակութային ձեռնարկներ, օժանդակելով Առաջնորդարանի անտեսական բարեբաւման : Հայոց Եկեղեցւոյ Երիտասարդաց Կազմակերպութիւնը եւ Դպրաց Դասերու Ընկերակցութիւնը կը ստանան որոշ նկարագիր եւ ուղղութիւն, ունենալով իրենց կանոնադիրը, գործունէութեան հաստատ ուղի-գիծը, իւրաքանչիւր համայնքի մէջ համախմբելով Եկեղեցւոյ երիտասարդ զաւակները, որոնք պատրաստ են ի սպաս դնել իրենց կարողութիւնն ու տաղանդը, Հայ Եկեղեցւոյ կոչումը իրազործելու՝ Ամերիկայի մէջ, եւ որոնք նախանձախընդիր են իրենց հայրերուն հաւատքը եւ իրենց եկեղեցւոյ ուսուցումները իւրացնելու, որպէս զի զիտակցօրէն ծառային աւոր, ու հաւատարիմ մնան անոր պատմութեան : Կը կանոնաւորուին Հոգեւորականաց Տարեկան Համագումարները : Թեմին յառաջդիմութեան, հովուական պատասխանատուութեանց եւ Եկեղեցական-ծիսական հարցերու մասին դադարաբաց եւ փորձառութեանց փոխանակութիւնը, այս համագումարները կը վեցածեն կրթարանի մը, ուրիշ ուղղութիւն եւ քաջալերութիւն ստացած, հովիւները կը դառնան իրենց հօտին, աշխատելով հետզհետէ զօրացնել ու կազմակերպել կեանքն ու գործունէութիւնը իրենց խնամքին յանձնուած համայնքներուն : Եկեղեցականաց ամառնային հաւաքոյթները, տարբեր վերինէն, շարաթ մը տեւողութեամբ, աւելի մտերմիկ մթնոլորտի մը մէջ իրարու կը բերեն Թեմին հոգեւորականները, ունկնդրելու պատրաստուած դասախօսութեանց, եւ

*Թեմին գանազան համայնքներէն հայընտանիքներ իրենց ամառանոցը կը տրամադրեն այս նպատակին, հոգալով բընակարժեան եւ սննդեղէնի կարիքները : Նօրթ-Գիլատելֆիոյ Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ ծխականներէն Տէր եւ Տիկին Արամ Արքեպեան չորս անգամ, Պիմկիւմբընի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ ծխա-

նկատի առնելու համար հայ եւ ընդհանուր եկեղեցական եւ մշակութային հարցեր* :

Տիրան Եպիսկոպոսի առաջնորդութեան առաջին վեց տարիներու շրջանին, Թեմին կանոնադրութիւնը երկու անգամ բարեփոխութեան կ'ենթարկուի : Ասիկա մէկ կողմէ կը նշանակէ խորունկ հետաքրքրութիւն Թեմին կացութեան նկատմամբ, եւ հայթայթում կանոնական միջոցներու՝ ապահովելու համար Թեմին բարգաւաճումը, եւ միւս կողմէ ցոյց կուտայ Տիրան Եպիսկոպոսի իմացական թափանցողութիւնը կանոնական հարցերու մէջ : Այլազան գործունէութիւններով աճող այս Թեմին համար անհրաժեշտ էր ունենալ համապատասխան օրինական գործիք մը, որպէս զի Թեմին գործերը յառաջ տարուին կարելի սահունութեամբ :

Մայր Եկեղեցւոյ եւ Մշակութային Տան կառուցման ծրագիրը՝ նախորդ առաջնորդներու եւ թեմական ժողովներու կողմէ առաջադրուած ու երազուած, գործնական հունի մը մէջ կը դրուի Մայր Եկեղեցւոյ Ծինութեան յանձնախումբերու կազմութեամբ, եւ Նիւ Եօրք քաղաքի մէջ գնելով հողը՝ կեդրոնական, բանուկ եւ երթեւեկութեան բազմազան միջոցներով մատչելի դիրքի մը վրայ : Ներգաղթի, ազգային ու բարեգործական նպատակներով ստիպողական նկատուած հանգանակութիւններ, եւ ճարտարապետական ընկերութեան մը հետ բանակցութեանց երկարաձգումը, պատճառ կը դառնան որ դանդաղի Մայր Եկեղեցւոյ եւ Մշակութային Տան կառուցումը :

Տառուր Տառուրեան, ներկայիս փոխ-

ատենապետ Թեմական Խորհուրդին եւ երկրորդ ատենապետ Թեմական Պատգամաւորական ժողովին, եւ իր երկու առեւտրական եւ ազնիւ ընկերները՝ Արթին Ասլանեան եւ Բիւզանդ Փիրանեան, կը հաստատեն Առաջնորդարանի Մասնաւոր Հիմնադրամը: Այդ նուիրատուութեան գումարը, 20,000 — քսան հազար — տուարով սկսուած, բարձրացուցած են 55,000 — յիսուն հինգ հազար — տուարի: Այս մասնաւոր Հիմնադրամի նպատակն է օժանդակել եւ զօրաւոր կանգնել Թեմին մէջ կատարուող եկեղեցական եւ մշակութային գործերուն: Նոր եկեղեցիներ ու սրահներ գնող կամ կառուցանող ծուխեր «առանց-տոկոսի-փոխառութեամբ» օժանդակութիւն ստացած են այս Հիմնադրամէն: Տատուրեան Ընկերութեան օրինակով իրենց առաջին նուիրատուութիւնը կատարած են նաեւ Տէր եւ Տիկին Հայկ Մարգարեան 5,000 — հինգ հազար — տուարով:

Կը հաստատուի Կարօտ Հոգեւորականաց Հիմնադրամը: Այս կերպով կ'ապահովուի կենսաթոշակը տարիքի եւ կամ Ֆրիդբահան անկարողութեան բերմամբ պաշտօնավարել չկրցող հոգեւորականներուն:

Տիրան Եպիսկոպոսի ջանքերով, մարդաշատ եւ եկեղեցւոյ շէնք ունեցող համայնքները կ'օժտուին գործունեայ եկեղեցականներով: Բոլոր փոքրաթիւ, եկեղեցւոյ շէնք կամ հովիւ չունեցող համայնքներուն հոգեւոր կարիքները կը հոգացուին կանոնաւորաբար, Առաջնորդի եւ ծխատէր հովիւներու այցելութիւններով, եւ շրջուն հովիւի մը Իշանակումով:

Ծխական եկեղեցիներու մէջ աշխուժօրէն ու նուիրումով կը պործեն Ծխական Խորհուրդներ, Տիկնանց Միութիւններ, Հայ Վարժարանի եւ Կիրակնօրեայ Դպրոցի Խնամակալութիւններ, Երիտասարդաց եւ ամուսնացեալ զոյգերու Կազմակերպութիւններ, Դպրաց Դասեր, եւ բազմաթիւ ուրիշ յանձնախումբեր: Տիրան Սըրբազան իր առաջնորդութեան կարեւոր գործերէն, եւ է՛ն կարեւոր գործերէն մէ-

կը, կը նկատէ այն մանր կարգադրութիւնները, ծուխերուն գրուած նամակները, ծխական Խորհուրդներուն եւ եկեղեցւոյ անդամներուն հետ կատարած տեսակցութիւնները, անոնց տրուած թելագրութիւնները, որոնք չեն տեսնուիր, հաղիւ զգալի կը դառնան, բայց որոնք մեծ դեր ունեցած են ծուխերու մէջ յարուցուած հարցեր կարգադրելու, և եկեղեցւոյ ընդհանուր գործը կարելի արդիւնաւորութեամբ յառաջ մղելու տեսակէտէն:

7. ՀԵՂԻՆԱԿ - ԳՐՈՂ

Տիրան Արքեպիսկոպոս ունի գրելու յրատակ, տրամաբանական եւ ուժեղ ոճ մը: Չէ այցուած գրականութիւն ընելու մտահոգութեան:

Երուսաղէմի Եղիշէ Պատրիարք Դուրեանի վախճանումէն յետոյ, տարի մը կը վարէ խմբագրութիւնը «Միոն» պաշտօնաթերթին, իսկ Թորոնթ Պատրիարք Գուշակեանի շրջանին կ'աշխատակցի, գրելով կրօնական եւ ուսումնասիրական յօդուածներ:

Բարիլի մէջ, 1938 - 1939, առանձին կը խմբագրէ «Մեր Տունը» հովուական-ծխական ամսաթերթիկը, երուանդ Պարկիրճեանի նիւթական օժանդակութեամբ:

Իբրեւ առաջնորդ Ամբերիկայի Թեմին, վերահսակիչն ու պատասխանատուն է «Հայաստանեայց Եկեղեցի» պաշտօնաթերթին եւ Հայց. Եկեղեցւոյ Երիտասարդաց Կազմակերպութեան հրատարակած «Արմէնիքն Կարտիրն» ամսաթերթին, որոնց խմբագրականներն ու առաջնորդող յօդուածները կը ճշտորոշեն Եկեղեցւոյ հիմնական կոչումն ու նկարագրը, և կը հաստատեն «Եկեղեցական քաղաքականութեան ուղեգիծ մը», ջրիստոնէական սկզբունքներու, առողջ դատողութեան, պատմական տուեալներու եւ փորձառութեանց, եւ ներկայ շրջանի հայեցողութեանց վրայ հիմնուելով: Թեմական Պատգամաւորական ժողովներու մէջ կարգադրած իր բացման ուղերձները՝ հայերէ-

նով, եւ Հայց. Եկեղեցւոյ Երիտասարդաց Կազմակերպութեան եւ Հայց. Եկեղեցւոյ Դպրաց Դասերու Ընկերակցութեան տարեկան համագումարներուն առիթով իր խօսած ու կարգադրած ուղերձները՝ անգլերէնով, վարչական ու կազմակերպական հարցեր շօշափելով հանդերձ, կը ներկայացնեն յստակ պատկերը արտայայտութեան շնորհք ունեցող իմացականութեան մը:

Ուսուցչական, վարչական, հովուական եւ առաջնորդական պաշտօնները հաղիւ թէ պատեհութիւն կուտան ուսումնասիրութիւններ կատարելու եւ զանոնք հրատարակելու: Եւ սակայն Տիրան Արքեպիսկոպոս կարող եղած է հրատարակելու չորս արժէքաւոր գործեր:

1. Պատարագամատոյց Հայաստանեայց Առաքելական Ուղղափառ Եկեղեցւոյ.

*ՊԱՏԱՐԱԳԱՄԱՏՈՅՑԸ բնագրին իւրաքանչիւր էջին հանդիպակաց ունի անգլերէն քարգամանութիւնը: Բոլոր գլխակարգութիւնները եւ հրահանգները կարմիր մելանով: Բոլոր բարձրաձայն կատարուող աղօթքները, սարկաւազի եւ դպիրներու բաժինները, դրուած են ուղղափայտաց կրկնակ գիծերու ձախ կողմը, իսկ «ի ծածուկ աղօթքները՝ աջ: Այսպէս՝ 107 էջ:

Էջ 108-117, Հոգեհանգստեան Պաշտօն: Էջ 118-125, Կարգ Պաշտաման շաշու: Էջ 127-211, կը պարունակէ 28 տարբեր տօներու և կիրակիներու ուրբ պատշաճները՝ Ս. Պատարագի յատուկ: Էջ 112-225, Տօնացոյց եւ Ընթերցումներ շաշու կիրակիէից եւ Տօնից: Էջ 226-227, Եղանակ գրտանելոյ Զամսաթիւս կիրակիէից եւ Տօնից յոր և իցէ Տարուջ: Էջ 228-229, Թուական Զատիկի, վերափոխման եւ հաշվերացի, 1950-2025 տարիներու: Էջ 230-233, Կարգ Մասանց Պատարագամատուցի: Էջ 234-241, Առաջին Տոգ Մասանց Պատարագամատուցի: Էջ 245, անգլերէնով,

2. Վարդապետական Դիրքը Հայաստանեայց Եկեղեցւոյ.
3. Կարգ Նաւակատեաց Եկեղեցւոյ, Ըստ Արարողութեան Հայաստանեայց Առաքելական Ուղղափառ Եկեղեցւոյ.
4. Քրիստոնէական Մօտեցում Մը Համայնավարութեան.

Մեսրոպ Վարդապետ Սէմէրճեան, յօդուածի մը մէջ հետեւեալ կերպով կը ներկայացնէ զանոնք. (տես Արմէնիքն Կարտիրն, 1953, Հոկտ.):

«Մեր Պատարագին ամբողջական եւ նոր մէկ թարգմանութիւնը կը գտնենք Պատարագամատուցին մէջ, որ ինքնին կը յայտնաբերէ աստուածաբանական խորունկ մտածողութիւն: Այս հատորը կը պարունակէ քսան էջոց մեկնաբանութիւն մը Ս. Պատարագի*:

«Վարդապետական Դիրքը Հայ Եկեղե-

հակիրն պատմականը Հայ Եկեղեցւոյ: Էջ 246-256, անգլերէնով, նկարագրութիւնը Ս. Պատարագի մէջ գործածական 46 կտոր գրեստներու եւ անօթներու, եւ ասոցմէ 14ին գծագրութիւնները: Էջ 257 - 263, անգլերէնով, Ս. Պատարագին առնչութեամբ, թիւով քսան, բարեպաշտական եւ արարողական կատարումներու մասին ցուցմունքներ: Էջ 265 - 292, անգլերէնով, մանրամասնօրէն կը պատկերացնէ իւրաքանչիւր պաշտօնեայի դիրքը, արարմունքներն ու մասնակցութեան կարգը Ս. Պատարագի եւ Հոգեհանգստեան պաշտամունքի միջոցին: Ամփոփ հրահանգ մը կայ «Գոց Պատարագի» մասին: Էջ 293 - 311, անգլերէնով, կը պարունակէ խիտ եւ ամբողջական մեկնաբանութիւնը Ս. Պատարագի, երեսուներուրբ տարբարձամումներով: Էջ 312 - 314, անգլերէնով, վերջաբան մը՝ այս գրքի պատրաստութեան մասին, և ցանկ մը Հայ Պատարագամատուցի անգլերէն քարգամանութեանց տասնևերկու հատորներու: (Ծնթ. Կենսագրին)

ցւոյ գրուածքը ուսումնասիրութիւն մըն է Միւրանակ - Երկարնակ ընդդիմաբանութեանց, ուր Տիրան Սրբազան (այն տան վարդապետ) ցոյց կուտայ թէ ինչպէս երկարնակութիւն դաւանող եկեղեցիներ (Հոսովմէական եւ Բիւզանդական) նահանջած են Քաղկեդոնի Ժողովին մէջ իրենց բռնած դիրքէն (451) եւ դարերու ընթացքին մօտեցած են Հայ եւ Արեւելեան ուրիշ Եկեղեցիներու ուղղութեան, եւ հետեւաբար Քաղկեդոնի եւ ոչ-Քաղկեդոնական եկեղեցիներու միութիւնը, առարկելի այդ կէտի մասին, ներկայիս, աւելի հեշտիւ կարելի է իրագործել:

«Կարգ նաւակառնայ Եկեղեցւոյ հասորը, յստակուած ու կարգաւորեալ հրատարակութիւնն է համապատասխան ծէսին՝ Մայր Մաշտոցէն առնուած, անհարկի կրկնութիւնները զանցելով, եւ արարողութեան գեղեցկութիւնը աւելի պարզօրէն եւ բանաւոր յստակութեամբ մը արտայայտելով*:

«Բրիտանիական Մօտեցում Մը Համայնավարութեան գրքոյիլը «փորձ մըն է մատնացոյց ընելու քրիստոնէական ջատագովութիւնը, զոր Եկեղեցին պարտաւոր է զարգացնել զիմադրաւելու համար համայնավարութեան մարտահրաւէրը:» Լոնտոնի Սէյնթ Փօլ Եկեղեցւոյ վերատեսուէր ռատիօկայանէ մը յարտարարած է թէ այս գիրքը արժէքաւոր նպաստ մը կը բերէ ըմբռնելու աւսակէտէն մէկը այն սղղակիե-

*ՎԱՐԳ ՆԱԻԱԿԱՏԵԱՅԸ կը պարունակէ հետեւեալը. — Կարգ Օրինութեան Տեղոյ Եկեղեցւոյ. Կարգ Հիմնարկութեան Եկեղեցւոյ. Կարգ Օրինութեան Եկեղեցւոյ. Կարգ Օժման Եկեղեցւոյ. Կարգ Օրինութեան Աւագանի. Կարգ Օրինութեան Պատկերաց: (Ծնթ. Կենսագրին)

րէն, որոնք սպառնան պիտի ձեւաւորեն . . . գիրք մը, որ արժանի է կարգացուելու՝ ուշադրութեամբ եւ քննադատ ուղիով:»

Տիրան Արքեպիսկոպոս ունի աշխատասիրութիւններ զորս կատարած է Երուսաղէմի մէջ իր վարդապետութեան եւ ուսուցչութեան օրերէն սկսեալ եւ որոնք կը մնան ձեռագիր վիճակի մէջ:

- Ա. Սուրբ Մեսրոպի Նկարագիրը
- Բ. Պատմութիւն Ընդհանուր Եկեղեցւոյ
- Գ. Հովուական Աստուածաբանութիւն
- Դ. Վարդապետական Աստուածաբանութիւն
- Ե. Հոգեւորական Աստուածաբանութիւն
- Զ. Մեկնութիւն Սաղմոսաց
- Է. Մեկնութիւն Հովմայեցոց Թղթոյն

Տիրան Արքեպիսկոպոս ծանօթ է իբրեւ լեզուագէտ հոգեւորական մը: Հայ լեզուի գրարար եւ արդի բարբառներուն սահունութեան հաւասար, ան կը դործածէ անգլերէն լեզուն: Ասոնց վրայ կ'աւելնան նաեւ Ֆրանսերէն եւ Թուրքերէն լեզուներուն իր ծանօթութիւնը: Տարրական ծանօթութիւն մը ունի նաեւ Արարերէնի եւ Յունարէնի:

Տիրան Արքեպիսկոպոս ներկայ շրջանի եկեղեցականութեան ամէնէն հմուտ, արդիւնաշատ եւ կարկառուն դէմքերէն է: Հայ Եկեղեցւոյ եւ Ժողովուրդին հոգեւոր ժառանգութեան դրօշը բարձր բռնած, այդ դրօշին խորհրդանշած խոչանքներուն իր ամբողջ անձը եւ կարողութիւնները նուիրաբերած հոգեւոր մշակն է, անձնդիր հովիւր, իմաստուն պատգամաբերը, քաջ եւ արթուն գիտապետը, Աստուծոյ ընտրեալ պաշտօնեան եւ Հայ Եկեղեցւոյ սրբազան եպիսկոպոսը:



ԻՐԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՍՈՍ ԵՒ ԶԳՏՈՒՄՆԵՐ

(ՏԻՐԱՆ ԱՐՔԵՊՍ. ՆԵՐՍՈՅԵԱՆ)



ԻՐԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՍՈՍ տեսիլք ունեցող հոգեւորականն է: Ան «զնած է ժամանակը», համաձայն Պօղոս Առաքելի բացատրութեան, եւ ինքզինքը պատրաստած ու նրււիրած է իր ասպարէզին պահանջներուն եւ իր կոչումին: Թերեւս իրեն պակսեցաւ նպաստը կազմակերպուած եւ աւանդութիւն ունեցող հաստատութեան մը՝ իր կարողութիւններն ու ձգտումները շահարկելու: Երուսաղէմի Ս. Յակոբեանց վանքը կը շարունակէր իր հին աւանդութիւնը՝ Սուրբ Տեղեաց պահպանութեան միակ մըտահոգութեամբ: Թերեւս իրեն պակսեցաւ նոյնպէս ընկերակցութիւնը նոյն նրււիրումով գօտեպինդ հոգիներու, նոյն տեսիլքի ճամբուն մէջ հոգեխառնուելու համար, եւ իրարմով զօրացած կամրջելու համար անջրպետը, որ գոյացած էր Հայ Եկեղեցւոյ նուիրապետութեան մէջ, անճիտումովը զիրենք կանխող գրեթէ ամբողջ սերունդի մը: Իրեն պակսեցաւ նաեւ ծրագրեալ աշխատանքի, ճշտորոշեալ ժամանակացոյցի մը համաձայն գործելու խտասպահանջ հետեւողականութիւնը, առանձինն պարտաւորուած ըլլալով հասնիլ այլազան կալուածներու մէջ ինկող աշխատանքներու: Եւ այս իսկ պատճառաւ, հաւանաբար, իր հետաքրքրութիւնը տարածուած է աստուածաբանական, օրէնագիտական, ու գիտութեան նուրբ հարցերէն մինչեւ վարչական, մեքենագիտական, մարզական, մատակարարական ու առեւտրական ամէնէն գործնական խնդիրները:

Տիրան Արքեպիսկոպոս առաքելական հոգի ունեցող, կանոնապահ եւ իր կոչումին հաւատարիմ եկեղեցականն է:

Ուսուցչական ասպարէզէն, վարչական, հովուական պաշտօններէն մինչեւ Թեմակալ Առաջնորդի եպիսկոպոսական վերա-

հսկողութիւնը, անիկա ամենուրեք եղաւ ժրջան աշխատաւորը, ծրագրող իմացականութիւնը, կազմակերպող ու յառաջ մղող կամքը, եւ յուսահատութեան դէմ մարտնչող զօրութիւնը:

Հակառակ որ Հայ Եկեղեցւոյ կանոնադիրքը չէ վերամշակուած բաւական ժամանակէ ի վեր, եւ հետեւաբար Եկեղեցւոյ ներկայ կեանքին պայմաններուն համապատասխան կանոններ կը պակսին՝ ուղեցոյց ունենալու համար նոր կացութեանց մէջ յարուցուած դժուարութիւններ հարթելու տեսակէտէն, Տիրան Արքեպիսկոպոս թափանցելով Հայ եւ Ընդհանուր Քրիստոնէական Եկեղեցւոյ կանոններու ոգիին, իր խնամքին յանձնուած հոգեւոր նաւը ուղիղ առաջնորդած է դէպի առաջադրուած սրբազան նպատակը:

Տիրան Արքեպիսկոպոսի սէրը հանդէպ Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց դարաւոր վանքը, անոր նուիրումը հայ ժողովուրդի հոգեւոր եւ մշակութային յառաջդիմութեան, անոր հաւատարմութիւնը հանդէպ Սուրբ Էջմիածնին եւ Մայր Աթոռոյ Գահակային՝ Հայ Եկեղեցւոյ եւ ժողովուրդի Հոգեւոր պետին, անոր գիտակից եւ աննախապաշար հայրենասիրութիւնը, հաստատ համոզումներու վրայ հիմնուած առաքինութիւններ են: Ամերիկայի Թեմին մէջ Հայ Եկեղեցւոյ նուիրապետութեան բաժանեալ հատուածին վերագործը ապահովելու համար, Տիրան Արքեպիսկոպոս իմաստութեամբ յառաջ տարած է բանակցութիւնները, ուղղամտօրէն առաջնորդուելով Հայց. Առաքելական Ուղղափառ Եկեղեցւոյ գերագոյն շահերէն, համաձայն Վեհափառ Հայրապետի հրահանգներուն, եւ արժանանալով նորին Ս. Օծութեան խորունկ գնահատանքին ու վստահութեան:

Վերոյիշեալ յատկութիւնները մասամբ

ի յայտ կուգան այն ուղերձին մէջ, զոր տառաջնորդ Տիրան Արքեպիսկոպոս ուղղած է Ամերիկայի Թեմին Պատգամաւորական Ժողովին, 1953 Հոկտեմբերին: Ստորեւ տրուած մէջըբերումները այդ ուղերձին, կ'ուրուագեն պատկեր մը Տիրան Արքեպիսկոպոսի իրագործումներէն ու ձրգտումներէն:

«Առաջնորդարանի գործերու շատութիւնը հետեւանքն է վերջին տարիներու ընթացքին մեր ծուխերուն մէջ յառաջ եկած արթնութեան, կազմակերպական յառաջդիմութեան եւ երիտասարդ տարրերու գործօն եկեղեցասիրութեան: Այս յառաջդիմութեան նշաններ են հաւատացեալներու նուիրատուութեամբ ծուխերու եկամուտներուն նշանակելի յաւելումը, Եկեղեցւոյ անդամներուն թուական աճումը, եւ եկեղեցական գործերու եւ պաշտօններու համար իրենց ժամանակն ու աշխատանքը նուիրելու տրամադիր պատուական անձերու բազմացումը:

«Առաջնորդին ամէնէն կարեւոր եւ առաջնակարգ գործերէն մէկն է ծուխերու այս յառաջդիմութեան տուած ուղղութիւնը եւ մղումը: Ան կարեւոր ժամանակ կուտայ ծուխերու գործունէութեան ընթացքին ծագած խնդիրներու անձամբ կամ թղթակցութեամբ կարգադրութեան, թոյլ չտալով որ անոնք դժուարութիւններ կամ խանգարումներ յառաջ բերեն: Կանոնադրութեան գործադրութիւնը ասպահովելու, դանազան մարմիններու եւ պաշտօնեաներու միջեւ համերաշխութիւն պահելու եւ հոգեւոր կեանքը յառաջ մղելու համար Առաջնորդին կողմէ հոգեւորականներու եւ հոգաբարձութեանց գրաւոր կամ անձամբ տրուած հրահանգութիւնները, անոնց հետ ունեցած ժողովները, Առաջնորդի մը գործին ամէնէն կարեւոր եւ ամէնէն արդիւնաւոր, թէեւ անտեսանելի, մասը կը կազմեն:

«Երկրորդ Աշխարհամարտի վերջաւորութենէն ասդին մեր Թեմին մէջ շինուած կամ գնուած են 11 եկեղեցիներ, 13 սրահ-

ներ, 9 տուներ եւ 9 կտոր հողեր: Այս բոլորը՝ մեր 37 ծուխերէն 23ին մէջ, տոնաց հաշուի առնելու Մայր Եկեղեցւոյ եւ Մըշակութային Տան շինութեանց համար սեպհականացուած կարեւոր ստացութիւնները: Այս կալուածներուն շատերուն շինութեան կամ գնման առիթով կատարուած հանգանակութեանց գործին դարկ տալու եւ անոնց յաջողութիւնը ասպահովելու համար Առաջնորդը շատ ժամանակ տուած եւ ջանք թափած է: Ասկէ դատ տեղ տեղ այդ շինութեանց վերաբերեալ ճարտարապետական եւ օրինական գործերու բարեօք կարգադրութեան հետամուտ եղած է եւ ժամանակ տուած:

«Մեր եկեղեցական կեանքը տեւականապէս վառ պահելու համար անհրաժեշտ է որ մեր Թեմին մէջ անցնող եւ հասնող սերունդներուն միջեւ ընդհատ տեղի չունենայ: Անհրաժեշտ է որ այս երկու սերունդները, որ ներկայիս բացառիկ կերպով կը գատորոշուին, շղթայուին իրարու: Այս պատճառաւ Ամերիկայի մէջ աւելի քան այլուր, կարեւոր է երիտասարդ սերունդին միտքն ու սիրտը ընտելացնել իրենց նախահարց քրիստոնէական հաւատքին, պատմութեան ու մշակութիւն:

«Այս նպատակաւ կազմուած է եւ կորովի կերպով կը գործէ Հայ Եկեղեցւոյ Երիտասարդաց Կազմակերպութիւնը Ամերիկայի: Այս կազմակերպութեան ստեղծման եւ դայն յառաջ մղելու գործին շատ ջանք թափած է Առաջնորդը, անհատապէս եւ խմբովին միշտ հանդիպելով մեր երիտասարդներուն եւ խօսքով ու գրով գործի մղելով դանոնք:

«Նոր կազմակերպութիւն մըն է նաեւ Դպրաց Դասերու Ընկերակցութիւնը, որ նոյնպէս կորովի մարմին մըն է, եւ որուն համար Առաջնորդական Փոխանորդին ջանքերը մասնաւորապէս նշանակելի եղած են: Այս Ընկերակցութեան համար ալ հոգածութիւն ցուցուցած է առաջնորդը:

«Դարձեալ Երկրորդ Աշխարհամարտէն ի

հրաւիրած է Առաջնորդը, իր կարելին ընելով անոր բարգաւաճման համար:

«Հայերէնի դպրոցներն ալ, որքան ալ ամենադժուարին պայմաններու ենթակայ եղած ըլլան անոնք, շարունակուած են հնար եղած չափով, եւ Առաջնորդը զանց չէ ըրած նաեւ զանոնք քաջալերելու իր պարտականութիւնը:

«Թեմին առաջնորդանիստ քաղաքին մէջ մեր ազգային արժանապատուութեան վայել Առաջնորդարանի շէնքի մը չգոյութիւնը ամէնէն տխուր երեւոյթն է: Մայր Եկեղեցիի մը եւ Մշակութային Տան մը շինութեան պէտքը վաղուց եւ ամենուն կողմէ սուր կերպով զգացուած է:

«Թեմական գործերու ուղիղ ընթացքով եւ բարեկարգ եղանակաւ յառաջդիմութեան համար անհրաժեշտ է ունենալ մեր պայմաններուն յարմարող եւ խնամքով գծուած թեմական կանոնադրութիւն մը: Այս ուղղութեամբ մեր թեմական կանոնադրութիւնը երկիցս բարեփոխուած է վերջին ինը տարիներու ընթացքին: Այս բարեփոխութեանց կարեւոր գործին համար Առաջնորդը ուշադիր ջանք թափած եւ ժամանակ տուած է:

«Թեմի հոգեւորականներէն անոնք որ տարիքի կամ հիւանդութեան, կամ այլ դժբախտութեան բերումով տնտեսական կարօտութեան մէջ կ'իջնան, անհրաժեշտ է որ ունենան համեստ օժանդակութեան մը ապահովութիւնը այդպիսի պատահականութեան մը պարադային:

«Անցեալ ինը տարիներու ընթացքին կատարուեցան նաեւ ինչ ինչ բացառիկ հանգանակութիւններ եւ տօնակատարութիւններ: Տօնուեցաւ 1949ին ամբողջ Թեմին մէջ Ամերիկահայոց Առաջնորդութեան Թեմին մէջ զօրացած եւ ծաւալած է Կիրակնօրեայ Դպրոցներու գործը: Մեր Թեմին մէջ Հայ Եկեղեցական կեանքին աշխուժութեան ամենէն կարեւոր արտայայտութիւնը եւ միանգամայն ազդակը եւ երաշխիքն է Կիրակնօրեայ Դպրոցի այս գործը, որուն կարելի ուշադրութիւն դարձուցած եւ ժողովուրդին ուշադրութիւնը

թեան հաստատման յիանաւակը: 1951ին տօնուեցաւ Վարդանանց նահատակութեան հազարհինգհարիւրամեակը:

«Այս տօնակատարութեանց վայելչութեան եւ արդիւնաւորութեան համար Առաջնորդը թէ կեղբոնին մէջ եւ թէ ծուխերուն մէջ ըրաւ իր կարելին, խօսքով, գրով եւ ուրիշ կերպով, . . .

«1945ին եւ 1946ին հանգանակութիւններ եղան Ս. Էջմիածնի համար: Ապա հանդանակութիւններ եղան Ս. Երուսաղէմի համար: Եղան նաեւ ազգային հանգանակութիւններ, ուրիշ կազմակերպութիւններու կողմէ, ինչպէս Հ. Բ. Ը. Միութեան ներգաղթի եւ կրթական գործի համար կատարած հանգանակութիւնները:

«Անցնող ինը տարիներու ընթացքին Առաջնորդը կատարեց ինչ ինչ բացառիկ առաքելութիւններ: Այս առաքելութեանց կարգին նշանակելի է 1945ին Ս. Էջմիածնի Ազգային Եկեղեցական Ժողովին իր մասնակցութիւնը ի դուրս Ամերիկահայ Պատգամաւորութեան:

«1950ին Միացեալ Ազգերու Կազմակերպութեան Խնամատարական Խորհուրդին առջեւ Ժընէւի մէջ, Չուիցերիա, Առաջնորդը ներկայացուց Երուսաղէմի Հայոց Պատրիարքութիւնը, եւ խօսեցաւ ու դիւանադատական աշխատանք կատարեց Ս. Երուսաղէմի միջազգայնական դատին ի նպաստ, նոյն խնդրով ասպայցելելով Երուսաղէմ եւս:

«1952ին Առաջնորդը սնհատական հանդամանքով եւ անպաշտօն կերպով ներկայ եղաւ, մասնաւոր հրաւերով, Շուէտի Լուստ քաղաքին մէջ, Հաւատոյ եւ Կարգի Համաշխարհային Եկեղեցական Ժողովին:

«Նոյն առիթով, Ամերիկահայութեան նախկին Առաջնորդ՝ Լըջանկայի շատակ Գարեգին Կաթողիկոսի քառասունքի առթիւ մեծանուն Հայրապետին հանդէպ Ամերիկահայ Ժողովուրդին մեծարանքը յայտնելու համար Առաջնորդը ներկայ գտնուեցաւ Անթիլիաս:

«Իր պաշտօնավարութեան ամբողջ շըր-

Ջանին մինչ մէկ կողմէն Առաջնորդը ամէն ճիգ թափեց Ամերիկայի մէջ Հայ Եկեղեցին ներքնապէս կենսունակ պահելու, միւս կողմէն ան ջանաց Հայ Եկեղեցին դուրսնել նոյն դիրքի վրայ ինչ դիրքի վրայ որ միւս Եկեղեցիները կը գտնուին այս երկրի մէջ, միշտ ի մտի ունենալով ի հարկէ մեր Եկեղեցւոյն եւ Թեմին չափական համեստութիւնը:

« . . . Որքան ալ իրաւունք ունենանք ուրախանալու մեր եկեղեցւոյ եւ ժողովուրդին այս երկրին մէջ ձեռք ձգած յաջողութիւններու վրայ, բազմապէս կանուխ տարիներուն, այնուհանդերձ պէտք է երբէք մեր աչքերը գոցենք մեր դժուարութեանց եւ մեր պակասներուն, մեր եկեղեցական կեանքին մէջ: Այդ թերիները տեսնելու համար կը բաւէ աչք մը նետել մեր շուրջը եւ գմեղ բաղդատութեան դնել մեզմէ աւելի զօրաւոր եւ բարեկարգ եկեղեցիներուն հետ, որոնք հաստատուած են այս երկրի մէջ մեզմէ առաջ եւ կը գործեն արդիւնաւորապէս:

«Սակայն կ'ուզեմ ըսել թէ այդ պակասները տեսնելով հանդերձ, որեւէ չափով յուսահատական զգացում ունենալու չենք մեր ապագային նկատմամբ: Այլ ընդհակառակը, մեր թերիները պէտք է տեսնենք, զանոնք դարձանելու հաստատ որոշումով միայն: . . .

«Մեր այժմեան կացութեան իրապաշտ եւ աննախապաշար վերլուծումը կ'առաջնորդէ մեզ հաւասարապէս հաւատալու թէ մեր Եկեղեցիին ապագան այս երկրին մէջ մեծապէս յուսալից է: Եւ երջանիկ եմ հաւատելու որ շատ հեռատես եւ հաւատաւոր անձեր ինծի հետ նոյն նախատեսութիւնը ունին: Միտիթարուած կը զգամ ինքզինքս որ մեր Եկեղեցիին այս երկրին մէջ խոստմնալից ապագային մասին հաւատքի իմ կոչը անապուտի մէջ ձայն մը չեղաւ: Այլ ուժգին արձագանք դուստը սրբութեան մէջ:

«Հետեւեալներն են այն քայլերը, որոնք պէտք է ձեռք առնուին մեր ազգային ե-

կեղեցական գործերը ամուր հիման վրայ եւ բարեկարգ վիճակի մէջ դնելու համար:

«Մեր Թեմը իր ներկայ վիճակին մէջ իսկ թէ աշխարհադրականօրէն եւ թէ կատարութեան անհրաժեշտ գործերու տեսակէտէն պէտք եղածէն աւելի ընդարձակ է կուռ գործունէութեան համար: Կարելոր է որ ծխական գործերը աւելի սերտօրէն համակարգուին եւ յառաջ մղուին: Ինծի կը թուի թէ ժամանակն հասած է որ Թեմը բաժնուի երեք փոխանորդութիւններու եւ իւրաքանչիւր շրջանի վրայ կարգուի հոգեւորական մը գործելու համար Կեդրոնի Առաջնորդարանին ընդհանուր իրաւասութեան ներքեւ: Պէտք է կազմուին նաեւ շրջանային ժողովներ գործելու փոխանորդին հետ: Առաջնորդին եւ Թեմական Խորհուրդին ներկայ կանոնադրական իրաւասութիւններէն մէկ մասը կարելի է փոխանցել այս փոխանորդական շրջաններուն:

« . . . Երկրորդ, մեր ծուխերէն ոմանք շատ մեծ են եւ չեն կրնար հասնիլ իրենց ծխականներու պէտքերուն: Ուստի կարելոր է որ այս մեծ ծուխերը բաժնուին աւելի փոքր ծուխերու, որպէս զի աւելի արդիւնաւոր ըլլան գործերը: Ըստ այսմ ծուխերու բաժանման այս ուղղութիւնը պաշտօնապէս քաջալերելու համար միջոցներ ձեռք առնել կարելոր է:

«Երրորդ, մեր Թեմին մէջ ներքին առաքելութիւն չի կատարուիր ներկայիս: Մինչդեռ անկազմակերպ համայնքներու Կեդրոնէն ոյժ պէտք է տրուի զանոնք կանոնաւոր ծուխերու վերածելու համար: Ծատ փոքր համայնքներու հոգատարութեան համար մասնաւոր ծրագիր պէտք է մշակուի եւ գործ կատարուի: Չենք կրնար անտարբեր գտնուիլ երբ Եկեղեցւոյ զաւակներէն ոմանք կ'ուժանան իրենց Եկեղեցիէն մոռնալով իրենց ինքնութիւնը եւ անցեալը:

«Չորրորդ, մեր Թեմին մէջ կրօնական, պատմական եւ մշակութային գրականութիւն, այսինքն գրքոյկներ եւ պրակներ

հրատարակելու եւ ցրուելու գործը պէտք է աւելի լրջութեամբ ձեռք առնուի եւ կորովի կերպով յառաջ տարուի: Վասն զի չենք կրնար ժողովուրդը Եկեղեցւոյ մէջ պահել առանց անոնց միտքը եւ հոգին սնուցանելու:

«Հինգերորդ, մամուլի տեղեկատուութեան կամ հանրային յարաբերութեանց դիւանի գործը, որ համեստ չափով մը ըսկուած է արդէն, պէտք է կանոնաւոր կերպով յառաջ տարուի: Այս դիւանի գործունէութեան միջոցաւ է որ մեր Եկեղեցին առ հասարակ պիտի ճանչցուի այս երկրին մէջ եւ իր վայել տեղը պիտի գրաւէ Ամերիկեան եկեղեցական կեանքին մէջ: Այս դիւանն է նաեւ որ մեր ժողովուրդին եկեղեցական եւ ազգային անխարդախ լուրերը հայթայթելու գործին պիտի օգնէ:

«Վեցերորդ, պէտք է թէ կիրակնօրեայ դպրոցներու եւ թէ ծխական այլ դպրոցներու հաստատման եւ զօրացման համար լուրջ ջանքեր թափուին: Կիրակնօրեայ դպրոցներու համար լաւ չէնք բնու, գիրքերու եւ ուսուցիչներու պատրաստութեան համար ցարդ կատարուածէն աւելի հիմնաւոր եւ աւելի ընդարձակ աշխատանք պէտք է կատարուի:

«Մինչեւ իսկ բարձր կամ միջնակարգ դպրոցներու հաստատումը հայաշատ քաղաքներու մէջ կարելի ձեռնարկ մըն է եւ անոր կարեւորութիւնը պէտք է անտես ընելով ականջի ետեւ նետենք:

«Եօթներորդ, Մայր Եկեղեցւոյ եւ Մշակութային Տան կառուցումը Նիւ Եօրքի մէջ, պէտք է զօրաւոր կերպով յառաջ մղուի ամբողջ Թեմին ծուխերուն եռանդուն մասնակցութեամբ: . . .

«Ութերորդ, մեր Թեմին եւ մինչեւ իսկ ի պահանջել հարկին արտասահմանի թեմերու պէտքերուն հասնելու համար հրամայական պահանջք մըն է նաեւ Ամերիկայի մէջ աստուածաբանական ճեմարանի

մը հաստատումը: Չենք կրնար մեր Եկեղեցին կանգուն պահել եւ յառաջդիմութեան ճամբուն վրայ մնալ առանց պէտք եղած թիւով եւ պատրաստութեամբ նրւիրեալ հոգեւորականութեան մը, որուն կանոնաւոր տեսականութեամբ մուտքը գործի դաշտէն ներս ապահովուած ըլլայ:

«Այս բոլոր գործերուն սկսելու կամ անոնց աւելի կանոնաւորութեամբ եւ եռանդով հետամուտ ըլլալու համար անհրաժեշտ է որ Առաջնորդարանը ունենայ ձեռնհաս եւ ժրջան պաշտօնեաներ եւ ըստեղծուի գործի արդիւնաւոր մեքենակաւորութիւն մը:

«Եւ այս բանը կարելի ընելու համար Առաջնորդարանի դարձական եկամուտները պէտք է աւելցուին համապատասխան չափով: Ներկայի անբաւարար, անկանոն եւ անապահով միջոցներով չենք կրնար շատ հեռու տեղ հասնիլ: . . .

«Պէտք է նաև ջանք թափուի որ Տատուրեան Ընկերութեան աղնիւ եւ հեռատես ազգասիրութեան օրինակին հետեւողներ գտնուին եւ Առաջնորդարանի մասնաւոր հիմնադրամը աճեցուի: . . .

«Մեր ցարդ ունեցած յաջողութիւնները մեզ կը վստահեցնեն թէ կրնանք տակաւին նորանոր նուաճումներ կատարել: Վերոյիշեալ առաջարկութիւններէն ոմանք արդէն դոհացուցիչ կերպով կատարուիլ սկսած գործերու կը վերաբերին: Իսկ մնացեալներու մասին, կը բաւէ որ մեր ուղեգիրը յստակ տեսնենք, եւ մեր կարելի միջոցներու սահմանին մէջ կորովի կերպով սկսինք գործի, այս տարի փոքր, զալ տարի աւելի լայն եւ հետզհետէ աւելի ընդարձակ չափով:

«Վստահ եմ թէ մեր բարեկեցիկ եւ աղնիւ ժողովուրդը երբ տեսնէ կատարուող եւ կատարուելիք գործը պիտի վճարէ եւ պիտի աշխատի անոր յաջողութեան եւ արդիւնաւորութեան համար: . . . »

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԳԻԾԵՐ
(ՏԻՐԱՆ ԱՐՔԵՊՍՆԵՐՍՈՅԵԱՆ)



ՏԻՐԱՆ ԱՐՔԵՊՍՆԵՐՍՈՅԵԱՆ՝ աւազանի անունով Ներսէս Թաւուքճեան, ծնած է 1904 Օգոստոս 23-ին, յԱյնթապ, Կիլիկիա: Հայրը՝ Ներսէս Աւագ Քահանայ Թաւուքճեան, մայրը՝ Անիցա Թաւուքճեան-Սուլահեան: Երկուքն ալ այժմ հանգուցեալ:

Ներսէս կ'ուսանի Այնթապի Վարդանեան նախակրթարանին մէջ:

Առաջին Համաշխարհային Պատերազմին, իր ծնողացը, երեք քոյրերուն եւ մէկ եղբոր հետ կը տարագրուի դէպի Սիւրիոյ անապատները:

Այնթապի հերոսամարտէն յետոյ ծնողքը կը հաստատուին Հալէպ:

1921 — Ներսէս Թաւուքճեան կ'ընդունուի Երուսաղէմի Ժառանգաւորաց Վարժարանը, որուն ընթացքը կ'աւարտէ 1924ին: Կը ձեռնադրուի Կիւսասարկաւագ եւ նոյն ատեն կ'ուսուցանէ հայոց նախակրթարանին մէջ:

1926, Հոկտեմբեր 4 — Ներսէս կը ձեռնադրուի սարկաւագ եւ երկու տարի կը հետեւի Ընծայարանի աստուածաբանական դասընթացքին, միեւնոյն ժամանակ աշխատելով Մալաթիա Արքեպիսկոպոս Օրմանեանի ԱԶԳԱՊԱՏՈՒՄԻ Գ. հաստիւն վրայ, ընդհանուր խմբադրապետութեան ներքեւ Բարգէն Եպիսկոպոս Կիւլէսէրեանի:

1927 — Ներսէս սարկաւագ կը նշանակուի Հայ Երուսաղէմի սրբատեղեաց իրաւունքներու քարտուղարութեան պաշտօնին:

1928, Յունիս 22 — Ներսէս Սարկաւագ կուսակրօն քահանայ կը ձեռնադրուի, Ամեն. Տ. Եղիշէ Պատրիարք Դուրեանի կողմէ վերակոչուելով Տիրան Արեղայ Ներսոյեան: Բարձրագոյն

ուսման համար, Նորայր Արղ. Պողարեանի հետ, կը զրկուի Անգլիա, նախ Քալէն ալ տեղ Բէզլէքէքըն, Եօրքչայր, եւ ապա Լոնտոնի Քիմկա Քալէնը:

1930, Յունիս — Տիրան Արեղայ կը վերադառնայ Երուսաղէմ: Կը նշանակուի անդամ Վանքի Կալուածոց Յանձնախումբին:

1930, Օգոստոս 23 — Տիրան Արեղայ կը ստանայ Վարդապետական Մասնաւոր Իշխանութեան չորս աստիճանները, եւ կը նշանակուի անդամ Ժառանգաւորաց Վարժարանի ուսուցչական կազմին:

1930 - 1931 — Տիրան Վարդապետ խմբագիր կը կարգուի Պատրիարքարանի պաշտօնաթերթ «ՄԻՈՆ» ամսագրին

1932 - 1937 — Տիրան Վարդապետ կը վարէ տեսչութիւնը Ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի: 1932ի դարնան կը զրկուի Անկիւ-Եզիպտական Մուսան, տեղոյն հայութիւնը հողեւորացէս միթարելու համար:

